

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՅՈՒՅԹ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ.

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ / ԾԱԾԿԱԳԻՐ 3.1-11/

- Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ աջակցում է քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեությանը:
- Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է համայնքի բնակչության ռազմա-հայրենասիրական դաստիարակությանը,
- Մասնակցում է համայնքի զինապարտների գրանցամատյանների օրենքով սահմանված կարգով վարման աշխատանքներին, նախապատրաստում և աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում առաջարկություն՝ զինապարտների վերաբերյալ, ցուցակները, ինչպես նաև ըստ բնակության վայրի, հաշվառումից հանվելու, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատելու վերաբերյալ տվյալները տարածքային զինվորական կոմիսարիատ ներկայացնելու համար:
- Իր իրավասության սահմաններում մասնակցում է զորակոչի, զորահավաքի և վարժական հավաքների կազմակերպման աշխատանքներին:
- Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է.
- Միջնակարգ կրթություն
- Տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը
- Համակարգչով և ժամանակակից տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:
Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կայանալու է 2017 թվականի դեկտեմբերի 6-ին ժամը 11.00 Նալբանդյանի համայնքապետարանի շենքում:
Մրցույթին դիմող ՀՀ քաղաքացիները Նալբանդյանի համայնքապետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.
- Դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով /ձևը լրացվում է փաստաթուղթը ներկայացնելիս/
- Արական սեռի անձինք՝ զին.գրքույկ կամ ժամանակավոր փոխարինոց և զորակոչային կցագրման վկայականի պատճենը:

- Հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 1801-Ն որոշմամբ հայտարարության ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով:

- Հայտարարություն այն մասին, որ ինքը չի ճանաչվել անգործունակ, կամ սահմանափակ գործունակ:

- Մեկ լուսանկար՝ 3x4 չափսի:

- Անձնագրի պատճեն:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները փաստաթղթերը հանձնում են անձամբ՝ ներկայացնելով անձնագիր կամ անձը հաստատող փաստաթուղթ: Դիմումներն ընդունվում են ամեն օր, ժամը 10.00-ից մինչև 17.00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետը՝ 2017 թվականի նոյեմբերի 20-ը:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Նալբանդյանի համայնքապետարանի աշխատակազմ: Հեռ. 094-008-308, 094-189-908, կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻՄ և ՀԳՄ հարցերով վարչություն, հասցեն՝ ք. Արմավիր, Աբովյան 71, հեռ. 0237-2-76-49, 0237-2-07-70: